ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՇԵՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վաղաշեն համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Վաղաշեն, (0262)-4-41-79, (0262)-4-36-42 vaghashen.g.p@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23-ը մարտի 2016 թվականի N 8-Ա

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 23-Ի ԹԻՎ 3 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի պահանջներով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Հաստատել ՀՀ Գեղարքունիքի մարզի Վաղաշեն համայնքի ավագանու 2016 թվականի մարտի 23-ի թիվ 3 հերթական նիստի օրակարգը՝
   1) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վաղաշեն համայնքի տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը հաստատելու մասին.
   2) Վաղաշեն համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակը, անվանումները, ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին.
   3) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վաղաշեն համայնքի 2016 թվականի բյուջեում փոփոխություն կատարելու մասին.
   4) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վաղաշեն համայնքի սեփականության 2015 թվականի գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին.
   5) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վաղաշեն համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 21-ի N27-Ա որոշմամբ հաստատված հավելվածում փոփոխություն կատարելու մասին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՖԵՈԴՈՐ
2. ՀԱԿՈԲՅԱՆ ՆՈՐԱՅՐ
3. ՀԱԿՈԲՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ

4. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՅՈՒՐԻԿ

5. ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԻՐՋԱՋԱՆ

6. ՊԵՏՐՈՍՅԱՆ ԲԱՅԱՆԴՈՒՐ

7. ՍՈՒԿԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ

8. ՍՈՒԿԱՐՅԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

9. ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՍՈՒԿԱՐՅԱՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ԼԱԶՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՇԵՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վաղաշեն համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Վաղաշեն, (0262)-4-41-79, (0262)-4-36-42 vaghashen.g.p@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23-ը մարտի 2016 թվականի N 9-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 33-րդ կետով՝ *համայնքի ավագանին որոշում է.*

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վաղաշեն համայնքի տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՖԵՈԴՈՐ
2. ՀԱԿՈԲՅԱՆ ՆՈՐԱՅՐ
3. ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱՐՈՒԺԱՆ
4. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՅՈՒՐԻԿ
5. ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԻՐՋԱՋԱՆ
6. ՊԵՏՐՈՍՅԱՆ ԲԱՅԱՆԴՈՒՐ
7. ՍՈՒՎԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ
8. ՍՈՒՎԱՐՅԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ
9. ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՍՈՒՎԱՐՅԱՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԼԱԶՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի
մարզի Վաղաշեն համայնքի ավագանու
2016 թվականի մարտի «23»-ի N 9-Ն որոշման

Վաղաշեն համայնքի ղեկավար Ա. Սուվարյան

ԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ

ԳԼՈՒԽ 1.
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վաղաշեն համայնքում (այսուհետ՝ Համայնք) տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության հետ կապված հարաբերությունները:
2. Սույն կարգի իրագործման նպատակը տեղական ինքնակառավարման, համայնքի բաղաքականության մշակման, տեղական ինքնակառավարման մարմինների կողմից որոշումների կայացման, հանրային տեղեկատվության լիարժեք մատչելիության ապահովման, համայնքի վարչական տարածքում գործող կանոնների և պարտականությունների իրագեկման հետ առնչվող գործընթացներին համայնքի բնակիչներին մասնակից դարձնելն է:
3. Սույն կարգի խնդիրներն են՝
   1) համայնքի բնակիչների մասնակցության ապահովումը համայնքի կառավարման գործընթացում,
   2) համայնքի կառավարմանը բաղաքացիական մասնակցության գործուն ձևերի կիրառումը,
   3) համայնքի բնակիչների և համայնքի ղեկավարի և նրա աշխատակիցների, ինչպես նաև համայնքային ենթակայության կազմակերպությունների միջև փոխվստահության մթնոլորտի ձևավորումը:
4. Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության սկզբունքներն են՝
   1) մատչելիությունը և հասանելիությունը,
   2) վստահությունը,
   3) թափանցիկությունը և հրապարակայնությունը,
   4) ակտիվությունը, օպերատիվությունը, արագ արձագանքումը,
   5) պատասխանատվությունը և հաշվետվությունը:

5. Համայնքի բնակիչները համայնքում տեղական ինքնակառավարմանը կարող են մասնակցել միայն իրենց նախաձեռնությամբ՝ համայնքում բնակիչների մասնակցության ապահովման միջոցառումների իրականացման շրջանակներում՝ հասարակական հիմունքներով:
6. Բնակիչների, նրանց խմբերի, տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերությունները, մասնակցության ձևերը, ընթացակարգերը սահմանվում են «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, ինչպես նաև սույն կարգով:
7. Տեղական ինքնակառավարմանը համայնքի բնակիչների մասնակցությունը կարող է տեղի ունենալ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունների շրջանակներում, իրենց կողմից կարգավորման ենթակա բնագավառներում:

ԳԼՈՒԽ 2
ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԸ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

8. Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության ձևերը և միջոցներն են՝
   1) տեղեկացման (իրազեկման, անհրաժեշտ տեղեկատվության ստացման) հնարավորությունը,
   2) համայնքում որոշումների կայացման գործընթացներում մասնակցելու հնարավորության ստեղծում Վաղաշեն համայնքի ղեկավարին կից խորհրդակցական խորհուրդների ձևավորման, հանրային լսումների անցկացման միջոցով,
   3) ընդունելությունների կազմակերպումը,
   4) համայնքի տարածքում հարցումների անցկացման կազմակերպումը և բնակիչների առաջարկությունների ներկայացման հնարավորությունը,
   5) արագ արձագանքման համար անհրաժեշտ միջոցների ստեղծումը, 6) բարձր տեխնոլոգիաների կիրառումը,
   6) համայնքի տարածքում գործող կանոնների և պարտականությունների մասին բնակչության իրազեկումը:
9. Վաղաշենի համայնքապետարանի աշխատակազմը (այսուհետ՝ Աշխատակազմ) համայնքի բնակիչներին, հասարակության ներկայացուցիչներին իրազեկում է տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մասին և կազմակերպում է վերջիններիս մասնակցությամբ միջոցառումներ՝ սահմանված Հայաստանի Հանրապետության օրենքներով և իրավական ակտերով, ինչպես նաև սույն կարգով:

10. Տեղական ինքնակառավարմանը մասնակցության իրավունք ունի համայնքի տասնվեց տարին լրացած յուրաքանչյուր բնակիչ:

11. Համայնքի ավագանու նիստի օրակարգում հարց ընդգրկելու նախաձեռնությամբ (այսուհետ՝ նախաձեռնություն) կարող են հանդես գալ 16 տարին լրացած և համայնքում հաշվառված բնակիչների ոչ պակաս, քան 1 (մեկ) տոկոսը: Նախաձեռնությունը ստորագրում են համայնքի՝ դրան կողմ բնակիչները և ներկայացնում են համայնքի ղեկավարին: Բնակիչների նախաձեռնող խմբի կողմից ընտրված ներկայացուցիչը ստորագրությունների պահանջվող քանակությունը ճշտելու նպատակով մինչև նախաձեռնությունը ներկայացնելը պետք է գրավոր հարցմամբ դիմի համայնքի ղեկավարին՝ համայնքի բնակչության տասնվեց տարին լրացած անձանց թվի մասին համապատասխան տեղեկատվություն ստանալու համար: Համայնքի ավագանու նիստի օրակարգ ընդգրկվելիք բնակիչների կողմից համայնքի ղեկավարին ներկայացվելիք նախաձեռնության փաթեթը պետք է ներառի.

ա. որոշման նախագիծ, որի տեքստի բովանդակությունը և կառուցվածքը համապատասխանում են «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի պահանջներին: Նախագծի տակ նշվում են նախաձեռնությունը ներկայացնողների ստորագրությունները, անունները,

բ. իրավական ակտի ընդունման հիմնավորումը,

գ. տեղեկանք՝ իրավական ակտն ընդունելու կապակցությամբ համայնքի բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացման կամ նվազեցման մասին,

դ. տեղեկատվություն նախագիծը ստորագրած բնակիչների անձնագրային տվյալների մասին:

Բնակիչների նախաձեռնությունը ավագանու նիստում ներկայացնում է նախաձեռնող բնակիչների ընտրած ներկայացուցիչը՝ որպես հեղինակ, իսկ դրա քննարկման կարգը սահմանվում է ավագանու կանոնակարգով:

12. Համայնքի ղեկավարը համայնքի բնակիչների նախաձեռնությունը ստանալուց, ստորագրությունները պատահական ընտրանքով ստուգելուց հետո մեկ ամսվա ընթացքում այն ընդգրկում է ավագանու նիստի օրակարգ:

13. Նույն նախաձեռնությունը ավագանու քննարկմանը կարող է կրկին ներկայացվել և օրենքով սահմանված կարգով ընդգրկվել օրակարգում՝ դրա հերթական քննարկումից առնվազն վեց ամիս հետո:

ԳԼՈՒԽ 3

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

14. Համայնքի ղեկավարը «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով սահմանված կարգով և սույն կարգին համապատասխան՝

1) համայնքի բնակիչների համար ստեղծում է բավարար պայմաններ՝ իրազեկ լինելու տեղական ինքնակառավարման մարմինների

գործունեության մասին և մասնակցելու համայնքի կառավարմանն ու զարգացմանը՝ այդ նպատակով օգտագործելով համայնքի բնակիչների իրազեկման համար նախատեսված միջոցները,

2) ապահովում է համայնքի բնակիչների իրազեկման և մասնակցության միջոցառումների կազմակերպումն ու անցկացումը բնակիչներին մատչելի և հարմար վայրերում, ինչպես նաև ստեղծում է համապատասխան անհրաժեշտ պայմաններ՝ այդ միջոցառումներին մասնակցելու ցանկություն հայտնած համայնքի հաշմանդամների և սակավաշարժուն խմբերի համար,

3) կազմակերպում է տեղական ինքնակառավարմանն առնչվող օրենսդրական և ենթաօրենսդրական կարևորագույն նախաձեռնությունների և նախագծերի, մասնավորապես համայնքի զարգացման ծրագրի և տարեկան բյուջեի, համայնքի կողմից մատուցվող հանրային ծառայությունների դրորտներում համայնքի ավագանու և ղեկավարի որոշումների, համայնքի գլխավոր հատակագծի, բաղաքաշինական, բնապահպանական, կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների հանրային լսումներ կամ քննարկումներ, դրանց վերաբերյալ առաջարկությունների ընդունումը և ներկայացումը նախաձեռնողներին և նախագծերի հեղինակներին,

4) համայնքի բնակիչներին, հասարակության ներկայացուցիչներին իրազեկում և (կամ) ներգրավում է համայնքի տարածքում կազմակերպվող ուսուցման և վերապատրաստման ծրագրերում,

5) կազմակերպում է բնակիչներին համայնքի հանդեպ ունեցած կամ այլ պարտավորությունների վերաբերյալ պատշաճ կարգով իրազեկումը,

6) մինչև համայնքի զարգացման բառամյա ծրագիրը և տարեկան բյուջեի նախագծերը համայնքի ավագանու հաստատմանը ներկայացնելը կազմակերպում և անցկացնում է հանրային բաց լսումներ և քննարկումներ:

15. Սույն կարգի 14-րդ կետում նշված իրավասությունների իրականացումը կարգավորվում է Վաղաշեն համայնքի ղեկավարի որոշումներով, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ որոշումների ընդունման իրավասությունը օրենքով վերապահված է համայնքի ավագանուն կամ կարգավորվում է այլ իրավական ակտերով:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Լ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՇԵՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վաղաշեն համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Վաղաշեն, (0262)-4-41-79, (0262)-4-36-42 vaghashen.g.p@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23-ը մարտի 2016 թվականի N 10-Ն

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ, ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ ԳՈՐԾՈՂ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ, ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 34-րդ կետով, 32-րդ հոդվածի 10.2-րդ կետով, 33.1-րդ հոդվածով, 54.1-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝ *համայնքի ավագանին որոշում է.*

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վաղաշեն համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակը, անվանումները, ձևավորման և գործունեության կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՖԵՈՂՈՐ
2. ՀԱԿՈԲՅԱՆ ՆՈՐԱՅՐ
3. ՀԱԿՈԲՅԱՆ ԿԱՐՈՒԺԱՆ
4. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՅՈՒՐԻԿ
5. ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԻՐՋԱՋԱՆ
6. ՊԵՏՐՈՍՅԱՆ ԲԱՅԱՆԴՈՒՐ
7. ՍՈՒՎԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ
8. ՍՈՒՎԱՐՅԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ
9. ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՍՈՒՎԱՐՅԱՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԼԱԶՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի
մարզի Վաղաշեն համայնքի ավագանու
2016 թվականի մարտի «23»-ի N 10-Ն որոշման

Վաղաշեն համայնքի ղեկավար Ա. Սուվարյան

ԿԱՆՈՆ

ՎԱՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ ԳՈՐԾՈՂ ԽՈՐՀՐԴԱՏՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ, ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

1. Վաղաշեն համայնքում տեղական ինքնակառավարմանը համայնքի բնակիչների, հասարակական կազմակերպությունների, միավորումների, հանրության մասնակցությունն ու իրազեկումը, ինչպես նաև տեղական ինքնակառավարման նկատմամբ հանրային վերահսկողությունը ապահովելու նպատակով Վաղաշեն համայնքի ղեկավարին (այսուհետ՝ համայնքի ղեկավարին) կից ստեղծվում և գործում են խորհրդակցական մարմիններ (այսուհետ՝ Խորհուրդ):
2. Խորհուրդն իր գործունեությունն իրականացնում է օրենքների և այլ իրավական ակտերի, ինչպես նաև սույն կարգի հիման վրա:
3. Խորհրդի խնդիրներն են.
   1) համայնքի բնակիչների, հասարակական կազմակերպությունների, միավորումների, ինչպես նաև քաղաքացիական հասարակության այլ ինստիտուտների ներգրավմամբ տվյալ ոլորտում հանրային կարևորության խնդիրների վերհանումը, դրանց վերաբերյալ կարծիքի (առաջարկ, եզրակացություն) տրամադրումը համայնքի ղեկավարին,
   2) համայնքի բնակիչների, քաղաքացիների, հասարակական կազմակերպությունների, միավորումների առաջարկությունների ուսումնասիրումը, քննարկումը և դրանց վերլուծության հիման վրա կարծիքի (առաջարկ, եզրակացություն) տրամադրումը համայնքի ղեկավարին:
   3) տվյալ ոլորտի կառավարման նկատմամբ հասարակական վերահսկողության իրականացումը:
4. Համայնքի ղեկավարին կից ձևավորվում և գործում են հետևյալ Խորհուրդները.
   1) համայնքի զարգացման քառամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման,
   2) համայնքի գլխավոր հատակագծի, քաղաքաշինական, բնապահպանական, կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների,
   3) համայնքի կողմից մատուցվող հանրային ծառայությունների:
5. Խորհուրդը ձևավորվում է մինչև 7 անդամի կազմով, իսկ համայնքի զարգացման քառամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման Խորհուրդը՝ մինչև 9 անդամի կազմով:
6. Համայնքի ղեկավարի առաջարկությամբ Խորհրդի անդամներին իր որոշմամբ նշանակում է համայնքի ավագանին՝ աշխատակազմի, համայնքային կազմակերպությունների համապատասխան մասնագետների ընդգրկմամբ, ինչպես նաև հասարակական հիմունքներով համայնքի բնակիչների և այլ շահագրգիռ անձանց ներգրավմամբ (վերջիններիս համաձայնությամբ), ընդ որում՝ համայնքի զարգացման քառամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման Խորհրդի կազմում ներգրավում են նաև.
   1) առավելագույնը համայնքի ավագանու 3 անդամ՝ վերջիններիս համաձայնությամբ,
   2) մինչև երեք փորձագետ՝ տվյալ բնագավառի մասնագիտական գիտելիքներ և բարձր որակավորում ունեցող, ցանկալի է, հայտնի ու հեղինակություն վայելող այն անձանցից, որոնք չեն աշխատում պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում կամ դրանց ենթակայության կազմակերպություններում և նախապես հայտնել են իրենց համաձայնությունը:
7. Հասարակական հիմունքներով համայնքի բնակիչների և այլ շահագրգիռ անձանց նշանակումը Խորհրդի կազմում կատարվում է իրենց դիմումի համաձայն՝ հրապարակային

հայտարարության հիման վրա, ըստ հայտերի ներկայացման հաջորդականության՝ մինչև սույն կարգով սահմանված անդամների առավելագույն քանակը լրանալը, ընդ որում՝ համայնքի զարգացման քառամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման Խորհրդի կազմում համայնքի բնակիչները ներգրավվում են յուրաքանչյուր թաղամասից մեկ բնակիչ (հնարավորության դեպքում):

8. Խորհուրդը ձևավորված է համարվում, եթե նշանակվել են տվյալ Խորհրդի առնվազն 4 անդամ, իսկ համայնքի զարգացման քառամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման Խորհուրդը՝ եթե նշանակվել են առնվազն 5 անդամ:
9. Խորհրդի աշխատանքները իրականացվում են նիստերի միջոցով, որոնք հրավիրվում են Խորհրդի նախագահի կողմից:
10. Խորհուրդը նախագահում է համայնքի ղեկավարը, որը նշանակում է Խորհրդի նախագահի տեղակալին ու քարտուղարին:

    Խորհրդի նախագահի տեղակալ կարող է լինել համայնքի ղեկավարի տեղակալը կամ համայնքի ղեկավարի խորհրդականը կամ օգնականը կամ համայնքի գյուղապետարանի աշխատակազմի քարտուղարը, իսկ քարտուղար՝ համայնքի գյուղապետարանի աշխատակազմի քարտուղարը կամ աշխատակիցը:
11. Խորհուրդն իր նիստերը կազմակերպում է գ. Վաղաշեն, 2-րդ փողոց, թիվ 3 հասցեում գտնվող համայնքապետարանի վարչական շենքում, եթե համայնքի ղեկավարի կողմից այլ որոշում չի ընդունվել:
12. Խորհրդի նախագահի որոշմամբ Խորհրդի նիստերին, խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են մասնակցել նաև այլ անձինք (հրավիրվածներ), ինչպես նաև զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներ:
13. Խորհրդի բնականոն գործունեությունն ապահովում է համայնքի ղեկավարը կամ նրա հանձնարարությամբ՝ աշխատակազմի համապատասխան աշխատակիցները:
14. Խորհրդի նախագահն իրականացնում է Խորհրդի գործունեության ընդհանուր ղեկավարումը:
15. Խորհրդի նախագահը՝

    1) հաստատում է Խորհրդի նիստի օրակարգը,

    2) հրավիրում է Խորհրդի նիստերը,

    3) կազմակերպում է Խորհրդի գործունեությունը և ղեկավարում դրա աշխատանքը,

    4) ստորագրում է Խորհրդի նիստի արձանագրությունը:
16. Խորհրդի նախագահի տեղակալը փոխարինում է Խորհրդի նախագահին նրա բացակայության ժամանակ:
17. Խորհրդի քարտուղարը՝

1) կազմում է նիստի օրակարգը և ներկայացնում Խորհրդի նախագահի հաստատմանը,

2) իրականացնում է նիստերի օրակարգում ընդգրկված հարցերի նախապատրաստումը, ապահովում է մասնակիցների ներկայությունը,

3) պատասխանատվություն է կրում ներկայացվող նյութերի ամբողջականության համար,

4) վարում է Խորհրդի գործավարությունը, այդ թվում՝ նիստի արձանագրության կազմումը:

18. Խորհրդի անդամը նախագահողի կողմից կարող է հեռացվել խորհրդի տվյալ նիստից խորհրդի նիստի աշխատանքները խոչընդոտելու դեպքում, մասնավորապես եթե .

    1) 2 անգամից ավելի թույլ չի տալիս Խորհրդի մյուս անդամներին ազատորեն արտահայտել իրենց կարծիքը քննարկվող հարցի վերաբերյալ և (կամ) խոչընդոտում է խորհրդի անդամի ելույթը,

    2) առանց ձայնի իրավունք ստանալու 2 անգամից ավելի արտահայտում է իր կարծիքը,

    3) որևէ այլ կերպ խոչընդոտում է Խորհրդի նիստի բնականոն ընթացքը:
19. Խորհրդի նիստերը գումարվում են առնվազն երեք ամիսը մեկ անգամ:
20. Խորհրդի նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա են նշանակված անդամների առնվազն կեսը:
21. Խորհրդի որոշումներն ընդունվում են եզրակացությունների և առաջարկությունների ձևով և կրում են խորհրդատվական բնույթ:
22. Խորհրդի անդամներն անձամբ մասնակցում են Խորհրդի նիստերին:
23. Խորհուրդն՝ ընդհանրական կարծիքի ձևավորման համար, քննարկվող հարցերի շուրջ որոշումներ է ընդունում բաց քվեարկությամբ՝ ներկա մասնակիցների ձայների մեծամասնությամբ, բայց ոչ պակաս քան Խորհրդի անդամների ընդհանուր թվի մեկ երրորդից ավելիի կողմից ընդունվելու դեպքում:
24. Խորհրդի քարտուղարը մշակում և կազմում է նիստի օրակարգը՝ համաձայնեցնելով Խորհրդի նախագահի հետ:

25. Խորհրդի նիստի օրակարգը Խորհրդի քարտուղարը ներկայացնում է Խորհրդի անդամներին՝ նիստից առնվազն երկու աշխատանքային օր առաջ:
26. Օրակարգում կարող են մտցվել լրացուցիչ հարցեր՝ համայնքի ղեկավարի կողմից:
27. Խորհրդի անդամն իրավունք ունի օրակարգ մտցնել լրացուցիչ հարցեր, եթե դրանք ընդունվում են քվեարկությամբ՝ ավյալ նիստին ներկա խորհրդի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:
28. Խորհրդի աշխատանքների վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվում է համայնքի քաղաքապետարանի վարչական շենքում կամ համայնքի քաղաքապետարանի պաշտոնական համացանցային կայքում (հնարավորության դեպքում): Խորհրդի ընդունած եզրակացությունները ու առաջարկությունները հրապարակվում են ամբողջությամբ:
29. Խորհրդի անդամ կարող են լինել 18 տարին լրացած յուրաքանչյուր անձ՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից:
30. Խորհրդի անդամ չեն կարող լինել՝
1) դատական կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված անձինք,
2) հանցագործության համար դատապարտված անձինք, որոնց դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ:
31. Խորհրդի անդամի լիազորությունները դադարեցվում են տվյալ անձին համապատասխան Խորհրդի կազմից հանելու մասին համայնքի ղեկավարի որոշմամբ, եթե Խորհրդի անդամը՝
1) դիմում է ներկայացրել Խորհրդից դուրս գալու վերաբերյալ,
2) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ,
3) երեք ամսվա անընդմեջ, անհարգելի պատճառով չի մասնակցել Խորհրդի նիստերի աշխատանքին,
4) տառապում է այնպիսի հիվանդությամբ, որը կարող է խոչընդոտել նրա լիազորությունների իրականացմանը Խորհրդում,
5) նրա նկատմամբ կա դատարանի օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճիռ,
6) նա մահացել է,
7) անձը դադարել է ավտոգանու անդամ լինելուց:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԼԱԶԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՇԵՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վաղաշեն համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Վաղաշեն, (0262)-4-41-79, (0262)-4-36-42 vaghashen.g.p@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23-ը մարտի 2016 թվականի N 11-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջներով՝ *համայնքի ավագանին որոշում է.*

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վաղաշեն համայնքի վարչական բյուջեի 4.2.4.1 գործառնական դասակարգման (ոռոգում) 4239 տնտեսագիտական դասակարգման ծախսային հոդվածից (ընդհանուր բնույթի այլ ծառայություններ) պակասեցնել (կրճատել) 1000.0 հազար դրամ, վարչական բյուջեի 8.2.4.51 գործառնական դասակարգման (այլ մշակութային կազմակերպություններ) 4267 տնտեսագիտական դասակարգման ծախսային հոդվածից (կենցաղային և հանրային սննդի նյութեր) պակասեցնել (կրճատել) 700.0 հազար դրամ, 4269 տնտեսագիտական դասակարգման ծախսային հոդվածից (հատուկ նպատակային այլ նյութեր) պակասեցնել (կրճատել) 300.0 հազար դրամ, ընդամենը՝ 2000.0 հազար դրամ, այն ավելացնել՝
1.1.Վաղաշեն համայնքի վարչական բյուջեի 4.2.4.53 գործառնական դասակարգման (ոռոգում) 4251 տնտեսագիտական դասակարգման ծախսային հոդվածին (շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում)՝ 1000.0 հազար դրամ.
1.2. Վաղաշեն համայնքի վարչական բյուջեի 10.7.1.54 գործառնական դասակարգման (սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող)) 4729 տնտեսագիտական դասակարգման ծախսային հոդվածին (այլ նպաստներ բյուջեից)՝ 1000.0 հազար դրամ:

Կողմ -9 Դեմ -0 Չեզոքացած -0

1. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՖԵՐԴՈՒ

2. ՀԱԿՈԲՅԱՆ ՆՈՐԱՅՐ

3. ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱՐՈՒԺԱՆ

4. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՅՈՒՐԻԿ

5. ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԻՐՋԱՏԱՆ

6. ՊԵՏՐՈՍՅԱՆ ԲԱՅԱՆԴՈՒՐ

7. ՍՈՒՎԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ

8. ՍՈՒՎԱՐՅԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

9. ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՍՈՒՎԱՐՅԱՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ԼԱԶՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՇԵՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վաղաշեն համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Վաղաշեն, (0262)-4-41-79, (0262)-4-36-42 vaghashen.g.p@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23-ը մարտի 2016 թվականի N 12-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 29-րդ կետով, 46-րդ հոդվածի պահանջներով՝ *համայնքի ավագանին որոշում է.*

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վաղաշեն համայնքի սեփականության 2015 թվականի գույքագրման փաստաթղթերը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՖԵԼԻԴՈՐ
2. ՀԱԿՈԲՅԱՆ ՆՈՐԱՅՐ
3. ՀԱԿՈԲՅԱՆ ԿԱՐՈՒԺԱՆ
4. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՅՈՒՐԻԿ
5. ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԻՐՋԱՋԱՆ
6. ՊԵՏՐՈՍՅԱՆ ԲԱՅԱՆԴՈՒՐ
7. ՍՈՒՎԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ
8. ՍՈՒՎԱՐՅԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ
9. ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՍՈՒՎԱՐՅԱՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԼԱԶՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՇԵՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վաղաշեն համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Վաղաշեն, (0262)-4-41-79, (0262)-4-36-42 vaghashen.g.p@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23-ը մարտի 2016 թվականի N 13-Ա

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N 27-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով՝ *համայնքի ավագանին որոշում է.*

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վաղաշեն համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 21-ի N 27-Ա որոշմամբ հաստատված հավելվածում կատարել փոփոխություն՝ աղյուսակի 4-րդ տողի (համայնքի ղեկավարի օգնական) 4-րդ և 5-րդ սյունակներում 140000 թվերը փոխարինել 135000 թվերով, իսկ աղյուսակի 14-րդ տողի (ընդամենը) 5-րդ սյունակում 3057000 թիվը՝ 3052000 թվով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2016 թվականի մայիսի 1-ից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՖԵՈԴՈՐ
2. ՀԱԿՈԲՅԱՆ ՆՈՐԱՅՐ
3. ՀԱԿՈԲՅԱՆ ԿԱՐՈՒԺԱՆ
4. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՅՈՒՐԻԿ
5. ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԻՐԶԱԶԱՆ
6. ՊԵՏՐՈՍՅԱՆ ԲԱՅԱՆԴՈՒՐ
7. ՍՈՒՎԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ
8. ՍՈՒՎԱՐՅԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ
9. ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՍՈՒՎԱՐՅԱՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԼԱԶՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հավելված
ՀՀ Գեղարքունիքի մարզի Վաղաշեն համայնքի
ավագանու 23.03.2016 թվականի թիվ 13-Ա որոշման

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՇԵՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 25

2. Հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

Հ/հ	Հաստիքի անվանում	Հաստիքային միավոր	Մեկ միավորի դրույքաչափը /ՀՀ դրամ/	Ամսական աշխատավարձը /ՀՀ դրամ/
1	Համայնքի ղեկավար	1	300000	300000
2	Համայնքի ղեկավարի տեղակալ	1	124000	124000
3	Համայնքի ղեկավարի խորհրդական	1	124000	124000
4	Համայնքի ղեկավարի օգնական	1	135000	135000
5	Աշխատակազմի քարտուղար	1	210000	210000
6	Գլխավոր մասնագետ	3	125000	375000
7	Առաջատար մասնագետ	3	124000	372000
8	Համակարգչային օպերատոր-գործավար	1	140000	140000
9	Տնտեսվար	1	124000	124000
10	Գրադարանավար	1	124000	124000
11	Վարորդ	1	124000	124000
12	Հավաքարար	3	90000	270000
13	Պահակ	7	90000	630000
	Ընդամենը՝	25		3052000

Համայնքի ղեկավար՝ Ա. Սուվարյան

Աշխատակազմի քարտուղար՝ Լ. Հովհաննիսյան